

ԴԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՍՈՒՆՔԻ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա.Ա. Մինասյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Դատողության մասին Արիստոտելի տրամաբանական ուսմունքը ներկայացված է նրա «Մեկնության մասին»¹ աշխատության մեջ, որը «Կատեգորիաներ» երկի հետ թարգմանվելով հայերեն (V դ. վերջ - VI դ. սկիզբ) Հայաստանում փիլիսոփայական գիտության ձևավորման փուլում, կարևոր դեր է խաղացել միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական, մասնավորապես տրամաբանական մտքի, զարգացման գործում:

Միջնադարյան հայ նշանավոր իմաստասեր, մանկավարժ և եկեղեցական գործիչ Հովհան Որոտնեցին (1315-1388 թթ.) իր «Համառատ լուծմունք Պերի արմենիաս գրոցն»² աշխատության մեջ համաճանրերեն վերլուծել ու մեկնաբանել է Արիստոտելի «Մեկնության մասին» երկը՝ դրսևորելով համակարգային մոտեցում և տեսական-վերլուծական բարձր մակարդակ, ինչպես նաև լավատեսություն և քննական վերաբերմունք՝ տրամաբանական խրթին հիմնախնդիրներին և դրանց վերաբերյալ փիլիսոփայական գրականության մեջ շրջանառվող տեսակետներին:

Հարկ է նշել, որ հայ իրականության մեջ «Կատեգորիաներին» անդրադարձած մեկնիչների մեծ մասը՝ Անանուն մեկնիչը (V-VI դ.), Վահրամ Բաբունին (XIII դ.), Պետրոս Արագոնացին (XIV դ.) ու Հովհան Որոտնեցին (XIV դ.), մեկնաբանել և վերլուծել են նաև «Մեկնության մա-

¹Արիստոտելի տրամաբանական երկերի ժողովածուի՝ «Օրգանոնի» բաղկացուցիչ մաս կազմող «Յաղագս մեկնութեան» աշխատության վերնագիրը հին հայկական թարգմանության և հետագա մեկնությունների մեջ պահպանվել է նաև հունարենի հայերեն ընթերցմամբ՝ «Պերի արմենիաս», հունարեն՝ *hermeneus* - «բացատրում են», «մեկնում են» բառից:

²«Յովհաննու Որոտնեցւոյ համառատ լուծմունք Պերի արմենիաս գրոցն» աշխատությունը պահպանվել է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Սատենադարանի շուրջ 39 ձեռագրերում՝ շնորհիվ նրա աշակերտ և հետևորդ Գրիգոր Տաթևացու գրառման: Մենք օգտվել ենք նշված աշխատության 1701 ձեռագիր (Նջ 145ա-271ա) օրինակից:

սին» երկը¹: Մեկնությունների այս շարքում առանձնանում են Անանուն մեկնիչի աշխատությունները: Դրանք հայ մշակութային միջավայրում շրջանառության մեջ են դրվել (ըստ ընդունված տեսակետի՝ թարգմանվել են հունարենից) Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի հայերեն թարգմանություններին զուգահեռ, և Արիստոտելի երկերի հետագա մեկնիչներից Վահրամ Բաբունյան և Յովհան Ռոտունեցին մեկնաբանել և վերլուծել են ոչ միայն սոսկ արիստոտելյան երկերը, այլ նաև դրանց՝ Անանուն մեկնիչի մեկնությունները²: Այս երևույթը պայմանավորված է նաև մի այլ համգամանքով. Անանուն հեղինակի մեկնությունները միջնադարյան Հայաստանի կրթական հաստատություններում ծառայել են իբրև տրամաբանության դասագիրք կամ ուսումնական ձեռնարկ: Իբրև «բան» (մեկնաբանության համար առանձնացված բնագրային հատվածը) գլուխ առ գլուխ ամբողջությամբ շարադրելով արիստոտելյան երկերի տեքստերը՝ այս մեկնությունները գործնականում հարմար ձեռնարկ էին ուսանողների համար նախ և առաջ այն պատճառով, որ վերանում էր «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերը ձեռքին ունենալու անհրաժեշ-

¹ «Կատեգորիաների» հայ մեկնիչներից Սովսես Քերթոզն (V դ.) ու Դավիթ Անհաղթն (V-VI դդ.) են, որ չունեն «Մեկնության մասին» երկի մեկնություն, թեև շատ հնարավոր է, որ վերջինս ունեցել է «Մեկնության մասին» երկի մեկնություն, որը, սակայն, չի պահպանվել:

² Ի դեպ, մենք ենթադրում ենք, որ հայերեն են թարգմանվել նախ նշված մեկնությունները, և քանի որ դրանք իրենց մեջ ամբողջությամբ պարունակում են «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» արիստոտելյան երկերի բնագրերը, այս վերջիններս հետագայում քաղվել, առանձնացվել են ամբողջական տեքստից: Այդ են վկայում ոչ միայն «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի հին հայկական թարգմանությունների և այս երկերի Անանուն հեղինակի մեկնություններում պարունակվող տեքստերի լիակատար համընկնումը, այլ նաև «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի հայկական թարգմանությունների գլուխների ինքնատիպ բաժանումը, որն, ըստ երևույթին, կատարված է ըստ Անանուն մեկնությունների պրակների մասնատման: Ուշագրավ է, «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի Վահրամ Բաբունյան և Յովհան Ռոտունեցու մեկնություններն են միայն, իբրև հիմք ունենալով արիստոտելյան երկերի Անանուն մեկնությունները, գլուխների և ենթագլուխների բաժանվում՝ ըստ այդ մեկնությունների համատիպ բաժանումների: Այնինչ Հայաստանում դավանաբանական և գիտակրթական լայն գործունեություն ծավալած կաթոլիկ միսիոներ Պետրոս Արագոնացու մեկնությունների գլուխների բաժանումը կատարվում է այլ եղանակով, հավանաբար այն պատճառով, որ նա օգտագործել է այս երկերի լատիներեն բնագիրը:

տություները: «Մեկնութիւն» (առանձնացված բնագրային հատվածի մեկնաբանությունը) բաժնի տեքստի պայմանական նշանները («բանը» նույնպես լրացված է նույն պայմանական նշաններով) հուշում են ուսանողին, թե բնագրի որ նախադասությանը կամ խնդրին են վերաբերում մեկնիչի բացատրություններն ու վերլուծությունները: Եվ օրինաչափ պետք է համարել, որ մանկավարժական լայն գործունեություն ծավալած միջնադարյան հայ մտածողները՝ Վահրամ Ռաբունին և Յովհան Ռոտմեցին, կրթական հաստատություններում կարդալով դասախոսություններ տրամաբանություն առարկայից, իրենց մեկնությունների համար բնաբաններ են քաղել ոչ միայն «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» արիստոտելյան երկերից, այլև դրանց՝ իբրև ուսումնական ձեռնարկ ծառայող, Անանուն մեկնություններից:

Յովհան Ռոտմեցու «Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի» և «Չամառաւտ լուծմունք Պերի արմէնիաս գրոցն» աշխատությունները գաղափարական առնչություններ ունեն նաև կաթոլիկ միսիոներ, Ղոմինիկյան միաբանության անդամ, 14-րդ դարի միարարական շարժման պարագլուխներից մեկի՝ Պետրոս Արագոնացու «Չամառօտ վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» և «Սկիզբն վերլուծութեան ի վերայ գրոցն որ կոչի Պերի արմէնիաս» երկերի հետ: Չայտնի փաստ է, որ անկախ սուրբեկտիվ՝ դավանաբանական-գաղափարախոսական բնույթի շահերից ու նպատակներից, կաթոլիկ միսիոներների ստեղծած հոգևոր ժառանգությունը շյուղեր է արձակել միջնադարյան հայ իրականության մեջ, դարձել հայ հոգևոր մշակույթի անբաժան արժեքներից: Յովհան Ռոտմեցին, լինելով միարարական շարժման հակառակորդ և ակտիվորեն պայքարելով Չայաստանում Ռոմի կաթոլիկ եկեղեցու ազդեցության տարածման դեմ, քաջատեղյակ է եղել այդ շարժման ղեկավարների՝ Բարդուղիմեոս Բղունացու և Պետրոս Արագոնացու երկերին, ավելին՝ իր աշխատություններում լայնորեն օգտագործել է դրանք: Իր կրոնա-գաղափարախոսական հակառակորդի աշխատությունների օգտագործմամբ Ռոտմեցին ոչ միայն հարստացրել է իր մեկնությունները կիրթ և գիտակ փիլիսոփայի տեսական վերլուծություններով, այլև անուղղակի ձևով ցույց է տվել, որ լատին քարոզիչների աշխատասիրություններում առկա հարուստ գիտա-փիլիսոփայական նյութը կարող է տեղ գտնել նաև հայ հավատքի ու կրոնի պաշտպանների երկասիրություններում՝ կազմելով նաև նրանց տեսական «զինամուրի» բաղկացուցիչ մասը: Պետրոս Արագոնացու մեկ-

նություններից քաղված վերլուծությունները Հովհան Ռոտմենցին օգտագործում է միայն իր լուծումներում, ձեռնպահ մնալով Պետրոս Արագոնացու անունը նշելուց. նա կա՛մ ընդհանրապես հրաժարվում է որևէ հղումից, կա՛մ բավարարվում է «իսկ այլք ասեն...» կա՛մ «ըստ այլ վարդապետաց է այսպէս» անորոշ հղմամբ¹:

Այսպիսով, իր «Համառատ լուծումը Պերի արմենիաս գրոցն» աշխատության մեջ Հովհան Ռոտմենցին Արիստոտելի երկից քաղված բնաբաններին զուգահեռ մեկնաբանել է նաև այդ երկի Անանուն մեկնությունից քաղված որոշ բնաբաններ, իսկ լուծումներում օգտագործել է ինչպես Անանուն հեղինակի, այնպես էլ Պետրոս Արագոնացու զաղափարներն ու վերլուծությունները²:

«Մեկնության մասին» երկին նվիրված իր աշխատությունը Հովհան Ռոտմենցին սկսում է համառոտ նախաբանով, որտեղ նա մինչև բուն մեկնության ենթակա արիստոտելյան նյութին անցնելը հարկ է համարում անդրադառնալ մեկնվող երկի վերնագրին, բաժանմանը, առարկային վերաբերող և մի շարք այլ խնդիրների: Արիստոտելի երկի վերնագրի կապակցությամբ Ռոտմենցին նշում է, որ ցանկացած բացատրություն, մեկնաբանություն խոսք («բան») է, իսկ Ստագիրացու այս աշխատությունը վերլուծում և մեկնում է հենց խոսքը. «Ցանկացած մեկնություն, ինչին էլ որ այն վերաբերի, կատարվում է խոսքով, քանի որ ցանկացած իրի՝ թե երկրի և թե երկնքի, թե գոյացության և թե պատահականի, մեկնություն՝ խոսք է: Իսկ այս գիրքը մեկնում է խոսքը, որն ինքը մեկնությունն է բոլոր իրերի, հենց այդ պատճառով էլ ասում

¹ Արագոնացու անունը չնշելը բացատրվում է այն հանգամանքով, որ վերջինս, այնուամենայնիվ, Հովհան Ռոտմենցու կրոնա-զաղափարախոսական հակառակորդն է, և Ռոտմենցին նրա հեղինակությունը չբարձրացնելու նպատակով խուսափում է անձը հայտնելուց: Պատահական չէ, որ կաթոլիկ միսիոներների աշխատությունները արտագրող գրիչները ևս, որպես կանոն, չեն նշում դրանց հեղինակների անունները:

² Ինչպես վերոնշյալ շարադրանքից պարզ դարձավ, նույնը (զաղափարական առնչությունների առումով) կարելի է ասել նաև Հովհան Ռոտմենցու «Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի» աշխատության մասին, այն տարբերությամբ, որ այս դեպքում Ռոտմենցին իր լուծումներում օգտագործում է «Կատեգորիաների» ոչ միայն Անանուն հեղինակի և Պետրոս Արագոնացու, այլև Դավիթ Անիադքի մեկնությունը, որը, սակայն, նա սխալմամբ վերագրում էր Դավթի ուսուցչին՝ Օլիպիոդորոսին:

է՝ «Մեկնության մասին», որ նույնն է թե՝ մեկնություն մեկնության մասին»¹:

«Քանի որ մարդկային գիտելիքը կախում ունի իրողություններից, պետք է որ այն բաժանվի ըստ իրողությունների տրոհման»², կարծում է Պետրոս Արագոնացին: Հետևելով Պետրոս Արագոնացուն՝ Յովհան Որոտնեցին արծանագրում է, որ իր այս երկում (ինչպես իր տրամաբանական երկերում ընդհանրապես) Արիստոտելը քննության առարկա է դարձնում «բանական իրողությունները» (որոնց սկիզբը բանականությունն է), այնինչ «բնական իրողությունները» (որոնց սկիզբը բնությունն է) քննվում են Ստագիրացու բնաբանական բնույթի երկերում, իսկ «բարոյական իրողությունները» (որոնց սկիզբը կամքն է)՝ վերջինիս առաքինությունների մասին ուսմունքում: Ըստ Պետրոս Արագոնացու, «բանական գիտության» մաս կազմող տրամաբանությունը («լօջիքայն») բաժանվում է ըստ «միության» երեք եղանակների, որոնց տարբերությունները կարելի է պատկերացնել «բնական իրողություններից» քաղված օրինակներով: Առաջին՝ ամենևին անբաժանելի միության օրինակ է հանդիսանում թիվը (ըստ Որոտնեցու՝ նաև աստվածային անճեղքելի էությունը): Երկրորդ՝ բաղադրյալ միությունը հիմնվում է նյութի և տեսակի միասնության վրա, ինչպիսին է, օրինակ, մարդը, որը մարմնի (նյութի) և հոգու (տեսակի) ամբողջություն է: Որպես երրորդ՝ կապի վրա հիմնվող միության օրինակ է բերվում խոսքը, ավելի ստույգ՝ նախադասությունը, որը կազմված է ենթակայից («անուն») և ստորոգյալից («բայ»): Թե՛ Արագոնացին, և թե՛ Որոտնեցին ընդունում են, որ «Մեկնության մասին» աշխատության մեջ Արիստոտելի ուսումնասիրության առարկան միության երկրորդ՝ բաղադրյալ տեսակն է, ինչպիսին նյութի և տեսակի միասնությունն է, ընդ որում, դատողության մեջ որպես նյութ հանդես է գալիս դատողության սուբյեկտը, իսկ որպես տեսակ՝ պրեդիկատը³: Ինչ վերաբերում է միության մյուս տեսակներին, ապա «Կատեգորիաներ»-ում Ստագիրացին անդ-

¹ Յովհաննու Որոտնեցույ համառատ լուծմունք Պերի արմենիաս գրոցն, էջ 145բ:

² Պետրոս Արագոնացի, Սկիզբն վերլուծութեան ի վերայ գրոցն որ կոչի Պերի արմենիաս, ՄՄ, ձեռ. 1684, էջ 151ա:

³ Տես Յովհաննու Որոտնեցույ համառատ լուծմունք Պերի արմենիաս գրոցն, ՄՄ, ձեռ. 1701, էջ 146ա, Պետրոս Արագոնացի, Սկիզբն վերլուծութեան ի վերայ գրոցն որ կոչի Պերի արմենիաս, ՄՄ, ձեռ. 1684, էջ 151ա-152ա:

րադառնում է միության առաջին տեսակին, իսկ մտահանգման տեսության մեջ՝ երրորդին¹:

Իր մեկնության մեջ Որոտնեցին քայլ առ քայլ հետևում է Արիստոտելի մտքերի ընթացքին: Նա մանրամասն և հանգամանալից քննության է ենթարկում Ստագիրացու երկի հիմնադրույթները, ելակետային արտահայտություններն ու հիմնարար հասկացությունները:

Նախքան բուն դատողության մասին ուսմունքը շարադրելը Արիստոտելը ձևակերպում է մի հիմնադրույթ, որը շատ կարևոր նշանակություն ունի ինչպես նրա դատողության տեսության, այլ տրամաբանական ուսմունքի համար ընդհանրապես: Նա գրում է. «Չնչուններում արտահայտվածը հոգում գտնվող պատկերացումների նշաններն են, իսկ գրերը՝ հնչյուններում արտահայտվածի: Այնպես, ինչպես գիրը միևնույնը չէ տարբեր մարդկանց մոտ, այնպես էլ միևնույնը չեն հնչյունները: Սակայն հոգում գտնվող պատկերացումները, որոնց անմիջական նշաններն են այն, ինչն արտահայտված է հնչյուններում, միևնույնն են բոլոր մարդկանց համար, ինչպես միևնույնն են իրերը, որոնց նմանակներն են պատկերացումները»²: Դրանով Արիստոտելը իրականության մեջ առանձնացնում է չորս շերտ՝ իրը, հոգում պարունակվող պատկերացումն իրի մասին, այսինքն՝ իրի իմացությունը (ի դեպ, այս երկուսը բոլոր մարդկանց մոտ նույնն են), պատկերացումը հնչեցման միջոցով արտահայտող բառը կամ բառակապակցությունը և այս վերջինս գրի միջոցով վերարտադրող նշանները (վերջիններս զանազան են տարբեր մարդկանց մոտ՝ շնորհիվ զանազան լեզուների և գրերի գոյության): Այս տեսական-մեթոդաբանական հիմնավորմամբ հետագա վերլուծություններում Արիստոտելը ձևական-տրամաբանական հիմնադրույթները ապացուցելիս ելնում է նաև գոյաբանական և իմացաբանական իրողություններից: Նշված սկզբունքը ունի և՛ գոյաբանական, և՛ իմացաբանական-տրամաբանական, և՛ քերականական, և՛ մեթոդաբանական նշանակություն: Իբրև մեթոդ, դա այն եղանակն է, որի միջոցով Արիստոտելին հաջողվում է իր տրամաբանական համակարգում կանխել իրական հիմքից կտրվելու վտանգը և չկորցնել

¹ Հետաքրքիր է, որ գրիչներից մեկը հակասություն է վերագրում Որոտնեցու մտքերին և իր կողմից «խմբագրում» դրանք. «Եւ գերեկորորդն, որ է միութիւնն ընդոյ և տեսակէ, ի բնականսն ասէ, իսկ գերորդոյ միութիւնն, որ է անուան և բայի, ասէ այժմ՝ ի գիրս յայս» (ՄՄ, ձեռ. 1697, էջ 189բ):

² Аристотель, Сочинения в четырех томах, т.2, М., 1978, стр. 93:

ցանկացած պահի այդ համակարգի իսկությունը փորձարկելու և ստուգելու հնարավորությունը:

Հովհան Որոտնեցին, ի թիվս արիստոտելյան այլ մեկնիչների, ըստ ամենայնի կարևորում ու մեկնաբանում է վերոհիշյալ հիմնադրույթը: «Այստեղ է սկիզբը այն բաների, որոնք պետք են առաջիկա գրքի համար,- գրում է Որոտնեցին,- Չորսն են սրանք՝ իրը, իրի իմացումը, ծայնը և գիրը: Երեքը հիշատակում է և իրը չի հիշատակում, քանի որ իրն արտաքին է, իսկ սրանք՝ մեր մեջ... Բայց պետք է իմանալ, որ նախատիպը, այսինքն՝ իրը, այն միշտ նշանակվում է: Իսկ իմացումը նշանակում է և նշանակվում, քանի որ նշանակում է իրը և նշանակվում է ծայնով: Նաև ծայնն է նշանակում և նշանակվում, քանզի նշանակում է իմացումը և նշանակվում է գրով: Իսկ գիրը միշտ նշանակում է»¹: Ընդ որում, գիրն ու ծայնը համարվում են մարդկային կամքին ենթակա, հետևաբար, տարբեր՝ զանազան լեզուներում, իսկ իրն ու իմացումը՝ բնությամբ, հետևաբար, նույնը բոլոր մարդկանց համար՝ անկախ լեզվի ու գրի տարբերության:

Վերոնշյալ արիստոտելյան հիմնադրույթի մանրակրկիտ վերլուծությունը Հովհան Որոտնեցու կողմից ամենևին ինքնանպատակ չէ: Եթե այդ բանաձևը Արիստոտելի համար մեթոդ է հանդիսանում դատողության մասին իր ուսմունքը կառուցելու և հիմնավորելու համար, ապա Որոտնեցու համար այն դառնում է նաև հիմնական մեկնողական սկզբունք, ելակետային դիրքորոշում: Հիրավի, չկա դատողությանը առնչվող որևէ լուրջ հիմնահարց, որը վերլուծելիս և փաստարկելիս Որոտնեցին չկիրառի գոյից իմացությանը, ապա ծայնին ու գրին (և հակառակը) անցնելու արիստոտելյան սկզբունքը կամ դրա առանձին օղակ-հարաբերությունները:

Այսպես, և՛ «Կատեգորիաների», և՛ «Պերի արմենիաս»-ի մեկնության մեջ Հովհան Որոտնեցին քննում է ճշմարտության հիմնահարցը: Նա տարբերակում է էության հետ կապված ճշմարիտը («այն ամենը, ինչ էություն է՝ ճշմարիտ է, և այն ամենը, ինչ ճշմարիտ է, էություն է»), որն անորոշ է, և բաղադրյալ ճշմարիտը, որը որոշակի է, «քանի որ ցույց է տալիս էության և գործի ճշմարտությունը»²: Ահավասիկ

¹ Հովհաննու Որոտնեցույ համառատ լուծմունք Պերի արմենիաս գրոցն, էջ 148բ-149ա:

² Երկու ճշմարտի վերաբերյալ միտքը Որոտնեցին, հավանաբար, ժառանգել է «Մեկնության մասին» երկի Պետրոս Արագոնացու մեկնությունից, սակայն այն ամբողջովին ներառված է նրա աշխարհընկալման համակարգում: Պատահական չէ, որ այն շեշտվում է նաև «Կատեգորիաների» մեկնության մեջ:

ճշտվում է, որ «Մեկնության մասին» երկուն խոսքը վերաբերում է բաղադրյալ ճշմարտին: Այնպես, ինչպես դատողության հիմքում ընկած է միության բաղադրյալ տեսակը, ճիշտ այդպես էլ դրա նկատմանը կիրառվում է կապի վրա հիմնվող որոշակի, բաղադրյալ ճշմարիտը: Դատողության ճշմարիտ և կեղծ լինելու հարցը վերաբերում է իրի և այդ իրի հատկության հարաբերության համապատասխանությանը այդ մասին մեր արտաբերած դատողության որակին: Այսպես, եթե իրականության մեջ տրոհվածը (Պետրոսին հատուկ չէ արդարությունը) տրոհված է նաև մեր մտքում (Պետրոսին հատուկ չէ արդարությունը), իսկ արտաբերված դատողությունը ժխտական է («Պետրոսն արդար չէ»), ապա այն ճշմարիտ է: Իսկ եթե իրականության մեջ կապվածը (Պետրոսին հատուկ է արդարությունը) մեր մտքում կապված չէ (Պետրոսին հատուկ չէ արդարությունը), իսկ արտաբերված դատողությունը ժխտական է («Պետրոսն արդար չէ»), ուրեմն այն կեղծ է¹: Ինչպես տեսնում ենք, դատողությունը ճշմարիտ է, եթե այն, ինչը կապակցված է իրականության մեջ (և մեր մտքում), ձայնային (ու գրային) արտահայտություն է ստանում որպես հաստատական դատողություն, իսկ այն, ինչը բաժանված է իրականության մեջ (և մեր մտքում), ձայնային (ու գրային) արտահայտություն է ստանում որպես ժխտական դատողություն:

Վերոհիշյալ ելադրույթի հիման վրա Արիստոտելը (նաև Որոտնեցին) վերլուծում է պարզ և բարդ դատողությունների հիմնահարցը: Արիստոտելը գտնում է, որ «Դատողությունը միասնական է, կամ երբ այն արտահայտում է մեկը, կամ կապակցման շնորհիվ: Դատողությունները բաղադրյալ են, երբ դրանք արտահայտում են շատը, և ոչ մեկը, կամ երբ դրանք կապակցված չեն միմյանց հետ»²: Համաձայն Հոփհան Որոտնեցու մեկնաբանության, պարզ և բարդ դատողությունների նշված դասակարգման հիմքում դարձյալ ընկած է իմացության և ձայնի փոխհարաբերությունը՝ հետևյալ տեսանկյունից: Ըստ Որոտնեցու, եթե իմացվածը մեկն է, և այն արտահայտող դատողությունը

¹ Արիստոտելյան «հոգում գտնվող պատկերացումն առարկայի մասին» հասկացությունը հայերեն է թարգմանվել «ներանձինցն ախտ», ալելի ուշ՝ «ներտրամադրեալ բան» համարժեքներով, իսկ «ինչյուններում արտահայտվածը» հասկացությունը՝ «ներծայնոջքն», հետագայում՝ «յառաջ բերեալ բան» եզրերով, թարգմանություններ, որոնք բառացի լինելով՝ դիպուկ են և ճշգրիտ:

² Аристотель, Сочинения в четырех томах, т.2, М., 1978, стр. 96:

միասնական է, ապա մենք գործ ունենք իրոք պարզ դատողության հետ: Այն դատողությունները, որտեղ իմացվածը մեկը չէ, սակայն այն արտահայտվում միասնական դատողությամբ, միջանկյալ դիրք են գրավում պարզ և բարդ դատողությունների միջև. որպես միասնական «ծայն»՝ հանդիսանում են պարզ դատողություն, որպես բաղադրյալ «իմացմունք»՝ բարդ դատողություն: Եվ, վերջապես, դատողությունը բարդ է, երբ «բազում իմացմունք»-ը արտահայտվում է մի քանի դատողությունների միջոցով¹: Ինչպես տեսնում ենք, պարզ և բարդ դատողությունների վերաբերյալ Ռոտմենցու խորհրդածությունները հեռու են հիմնահարցի միանշանակ, սխեմատիկ լուծումից: «Շաղկապաւ մի» և «շաղկապաւ բազումք» ենթատեսակները համարելով դատողության և՛ բարդ, և՛ պարզ տեսակ՝ հայ մեկնիչը դրանով իսկ ավելի շատ տալիս է խնդրի էությունը, դրվածքը, քան դատողության խիստ սխեմատիկ դասակարգումը²: Հարցի լուծման մեջ պարզություն է մտնում հետագա շարադրանքի ընթացքում, երբ բացի մեկ իմացությունը մեկ ծայնով արտահայտող դատողությունից, որի դեպքում մեկ անվանը (որը «հոմանուն» չէ) ստորոգծվում է մեկ բայ, դատողության բոլոր մնացած տեսակները համարվում են բարդ կամ «բազում»:

Գոյից ու դրա հատկություններից ելնելու սկզբունքով է առաջնորդվում Հովհան Ռոտմենցին հակադրության եղանակները, հակադիր դատողությունների միջև փոխհարաբերությունները (միասին ճշմարիտ կամ կեղծ լինելու հնարավոր տարբերակները) քննարկելիս: Հիմնվելով նաև Անանուն մեկնիչի դրույթների վրա՝ Ռոտմենցին տարբերակում է նյութի «հարկավոր» կամ «մշտնջենավոր», «նեղընդունական» կամ «փոփոխական» տեսակները: Նա գտնում է, որ «հարկավոր» նյու-

¹ Յովհաննու Ռոտմենցույ համառատ լուծումը Պերի արմենիաս գրոցն, էջ 167բ-168ա:

² Հովհան Ռոտմենցու փոխոսփայական ուսմունքին նվիրված իր ուսումնասիրության մեջ Գ. Գրիգորյանը նրա (ինչպես նաև Անանուն մեկնիչի) մտքերը դատողությունները «ի մի և ի շաղկապաւ մի, ի բազումս և ի շաղկապաւ բազումք» տեսակների դասակարգելու վերաբերյալ որոշակիորեն անջատում է դատողությունները պարզի և բարդի բաժանելու մասին արիստոտելյան դրույթներից և գտնում է, որ «Հետևելով զլիաւորապես «Պերի արմենիասի» անհայտ հեղինակի հայերեն մեկնության մեջ արտահայտած տեսակետներին, Ռոտմենցին նոր տարրեր է մտցնում Արիստոտելի կողմից դատողությունները տեսակների բաժանելու հիմնական սկզբունքի մեջ» (տես Գ. Գրիգորյան, Հովհան Ռոտմենցու փոխոսփայական ուսմունքը. Երևան, 1980, էջ 203-205):

թի դեպքում տվյալ հատկությունը անհրաժեշտաբար, անպայմանորեն հատուկ է տվյալ իրին, արտահայտում է դրա ներհատուկ էությունը, ինչպես օրինակ՝ ջերմությունն անհրաժեշտաբար հատուկ է կրակին, իսկ սառնությունը՝ ձյանը: Ինչ վերաբերում է «հարկավոր»-ի և «մշտնջենավոր»-ի փոխհարաբերությանը, ապա, ըստ Որոտնեցու, «Մշտնջենավորները ոչ միայն հրեշտակներն են կամ հոգիները, այլև բոլոր հարկավորները մշտնջենավորներ են կոչվում՝ ինչպես կրակի ջերմությունը և ձյան ցրտությունը»¹: «Ներընդունական» նյութը, որն ամբողջովին նույնանում է «փոփոխական»-ի հետ, որոշ դեպքերում կարող է ընդունել, որոշ դեպքերում՝ չընդունել տվյալ հատկությունը, օրինակ՝ աղջիկը կարող է գեղեցիկ լինել կամ այդպիսին չլինել: Ելնելով նյութի «հարկավոր» կամ «ներընդունական» լինելուց՝ Որոտնեցին որոշում է, թե հակադրության յուրաքանչյուր տեսակի դեպքում («ներհակ», «ենթաներհակ», «անորոշ», «հակասական» և «իւրաքանչիւր») հակադիր դատողությունները ճշմարտության և կեղծության ինչպիսի արժեքներ են ընդունում: Այսպիսով, հակադիր դատողությունների ճշմարտության և կեղծության արժեքների ձևական խնդիրը Յովհան Որոտնեցու կողմից ստանում է բովանդակային, գոյաբանական բացատրություն:

Գոյաբանական դիրքորոշմանը Որոտնեցին հավատարիմ է մնում նաև ապագային վերաբերող և մողալ դատողությունների մասին արիստոտելյան հիմնադրույթները մեկնաբանելիս:

Այսպես, ապագային վերաբերող հակասական դատողությունների արժեքների վերաբերյալ Արիստոտելը առաջադրում է այն կարևորագույն դրույթը, որ չի կարելի որոշակիորեն պնդել, թե դրանցից որն է ճշմարիտ և որը՝ կեղծ, կարելի է միայն այն պնդել, որ մեկը ճշմարիտ է, մյուսը՝ կեղծ²: Եվ քանի որ, ըստ արիստոտելյան ուսմունքի, «ինչ-որ բանի մասին խոսքը նույնքան ճշմարիտ է, որքան այդ ինչ-որ բանը»³, ապա իր վերոշարադրյալ տրամաբանական դրույթը հիմնավորելու համար Արիստոտելը անցում է կատարում այդ ինչ-որ բանին, այսինքն՝ գոյին: Արիստոտելը պնդում է, որ բացի խիստ անհրաժեշտության ձևով գոյության եղանակից, կա նաև պատահական գոյության ե-

¹ Յովհաննու Որոտնեցույ համառատ լուծմունք Պերի արմենիաս գրքոց, էջ 186բ:

² *Stu Аристотель, Сочинения в четырех томах, т.2, М., 1978, стр. 102:*

³ Նույն տեղում:

ղանակ, այսինքն՝ իրականությանը հատուկ է նաև դիպվածը, «բարեբախտութիւն»-ը, կախումը՝ սուբյեկտից կամ մարդկային կամքից, այսինքն՝ պատահականը: Ըստ Արիստոտելի, «էական» («ոչ էական») գոյություն ունենալու (գոյություն չունենալու) եղանակը և՛ որպէս իրականություն, խիստ անհրաժեշտություն, հնարավորություն կամ պատահականություն, պայմանավորում է արտաբերյալ խոսքի, առավել ստույգ՝ հակադիր դատողությունների արժեքները:

Խիստ ուշագրավ են վերոշարադրյալ արիստոտելյան դրույթների Դովիան Որոտնեցու «լուծումը»-բացատրությունները: Որոտնեցին կարծում է, որ ողջ գոյավորը Արիստոտելը բաժանում է չորսի կամ ընդունում է գոյություն ունենալու չորս եղանակ. մախ, խիստ, անպայման անհրաժեշտություն («անխափան մշտնջենավորը»)՝ «ինչպէս Աստված, հրեշտակները և արևը, քանի որ սրանք միշտ մնում են այնպիսին, ինչպիսին կան», երկրորդ՝ թույլ, պայմանական անհրաժեշտություն («խափանելի մշտնջենավորը»)՝ «ինչպէս կրակի ջերմությունը, երբ մարում է՝ խափանվում է, ինչպէս նաև ծյան ցրտությունը», երրորդ, փոփոխելի իրականություն՝ «որպէս հագուստը, որ կարող է պատռվել և չպատռվել, և փայտը՝ կարող է կոտրվել և չկոտրվել» և չորրորդ, հնարավորություն. այդպիսին են հենց ապագային վերաբերող երևույթները՝ նավամարտությունը վաղը կարող է տեղի ունենալ կամ ոչ, վաղը կարող է անծրև գալ կամ ոչ¹: Դավատարիմ մնալով արիստոտելյան ուսմունքի ոգուն՝ Որոտնեցին գտնում և բացահայտում է այն գոյաբանական հենքը՝ գոյություն ունենալու եղանակները կամ ձևերը, որի հետևանքով ապագային վերաբերող հակասական դատողությունների մասին չի կարելի որոշակիորեն պնդել, թե որն է ճշմարիտ և որը՝ սխալ: Որոտնեցու տրամաբանական ուսմունքի ընդգծված գոյաբանական միտվածությունը դիպուկ ձևով նկատել և արձանագրել է նաև Գ. Գրիգորյանը. «Դատողությունների և առհասարակ մտքի ձևերի նկատմամբ դրսևորվող այս օնտոլոգիզմը չափազանց հետևողականորեն է կիրառվել Որոտնեցու կողմից տրամաբանական հարցեր քննելիս: «Պերի արմէնիասի» մեկնության բազմաթիվ էջերում նա արտացոլել է մտքի ձևի կապը իրականության հետ»²:

¹ Տես նույն տեղը, էջ 195բ-196ա:

² Գ.Գրիգորյան, Դովիան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, էջ 211-212:

Այսպիսով, Արիստոտելի դատողության մասին ուսմունքի և դրա
Չովիան Որոտնեցու վերլուծության հիմքում ընկած «իրից» «իմացմա-
նը» և ապա «ձայնին» և «գրին» անցնելու հիմնադրույթը հնարավո-
րություն է ընձեռում միջնադարյան հայ մեկնիչին դատողությանը
առնչվող հիմնահարցերը քննել և լուսաբանել ոչ միայն նեղ՝ ձևական
տրամաբանական տեսանկյունից, որոնք, ի դեպ, զգալի տեղ են գրա-
վում նրա աշխատության մեջ, այլև իմացաբանական, քերականական
և, հատկապես, գոյաբանական տեսանկյուններից: